

կան շղթայքն Պետրոսի. եւ խնդրեցաք վա-
նաց չորէն, որ երաց մեզ եւ եցոյց մեզ
զշղթայս եւ զինճիւն խնկարկութեամբ եւ բա-
10 զուս ջահիւք եւ մոմովք, զոր ահիւ եւ զողու-
թեամբ եւ աղօթիւք անցուցին ի վիզս մեր
ամենիս: Եւ զայն պահեալ՝ բերին մեզ Ան-
ւրէի առաքելոյն խաչափայտն, որ պատած էր
խատիՓով. զոր խնդութեամբ համբուրեցաք
15 եւ երեսնիս շփեցաք. եւ զի հին էր եւ մաշած,
արծաթն անցուցել էին:

Եւ անտի եկաք ի Սան Տօմէնիք. որ եւ
սա մեծ եւ փառաւոր եկեղեցի է. եւ լայնա-
նիստ, ի բարձր լերան վրայ, սալարակապ
20 վիմօք: Եւ մերձ այս վանիցս էր վանքն
Ալէքսիանոսի ճգնաւորի. եւ մտեալ ի ներս՝
տեսաք զգեղեցկաչէն տաճարն. եւ տարան
զմեզ ի խուղն, ուր ԺԲ ամ ճգնեցաւ. յորում
զրած էր ամէն տնօրինականքն. եւ էին տախ-
25 տակքն եւ սիւնքն հնացեալ: Եւ անտի տա-
րան զմեզ ի զօրաւոր պատկերն Աստուածած-
նին, ուստի ձայն ել թէ Մուծէք այսր զմարդն
Աստուծոյ. եւ զրած էր զհայր եւ զմայրն. եւ
մատուռն ուր ծնողացն գերեզմանքն էին. զոր
30 երկրպագեալ մեղաց թողութիւն խնդրեցաք:
Եւ այս վանքեր ամէն ի վերայ լերին էին. եւ
գետն առջեւովն կ'երթայր:

Եւ անտի եկաք Գրիգոր Ակոսակօնտացոյն
վանքն. եւ տեսաք բանտն եւ աղօթատեղն.